ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը

Նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային (COVID-19) հիվանդությամբ պայմանավորված համաճարակային իրավիճակով, ինչպես նաև տնտեսական գործունեության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման արդյունավետության բարձրացման, վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ծառայողների և տնտեսավարողների համար անհարկի վարչարարության կրճատման և տվյալ ոլորտում գործող ընթացակարգերի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

2. Առկա իրավիճակը

Ներկայում, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում շարունակում է պահպանվել կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված արտակարգ իրավիճակը: Վերոգրյալով պայմանավորված **2020 թվականի սեպտեմբերի 4-ին ընդունվել է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով տեսչական մարմինների համար նախատեսվել է նոր գործիքակազմ, մասնավորապես՝** առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը և սննդամթերքի անվտանգության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը **լիազորվել են իրականացնել վերահսկողություն՝** *տնտեսական գործունեության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ*

կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ՝ **կազմակերպություններ ստուգայցերի միջոցով՝ տեսչական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ:** Ստուգայցն իրականացվում է առանց նախնական ծանուցման:

Այսպիսով, տեսչական մարմինը՝ ***առանց նախապես ծանուցելու***, համապատասխան հրամանի հիման վրա իրականացնում է ստուգայց, ստուգայցի արդյունքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ չհայտնաբերելու դեպքում ***կազմում է սանիտարական կանոնների պահպանման վերաբերյալ արձանագրություն,*** իսկ ստուգայցի արդյունքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում ***նախազգուշացնում*** է կազմակերպությանը միջոցառումների և սահմանափակումների խախտման մասին:

Ստուգայցի արդյունքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում ***կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ՝*** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածի համաձայն՝ իրականացնելով վարույթ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի պահպանմամբ: Այսպիսով, Կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չզբաղվող այլ կազմակերպությունների, այդ թվում՝ կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքում տեսչական մարմինները վարույթը իրականացնում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված **ընդհանուր ընթացակարգերի պահպանմամբ,** ինչը խնդրահարույց է, թե վարչական մարմինների թե տնտեսավարողների համար: Հարկ է նշել նաև, որ նախկինում ստուգայցի արդյունքում իրականացվող վարույթի առանձնահատկություններ չեն նախատեսվել՝ ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ կառավարության՝ 2020 թվականի մարտի 16-ի **«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին»** N 298-Ն որոշմամբ արտակարգ

դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծվել է պարետատուն և համապատասխան պարտադիր պահանջները սահմանվել են Պարետի որոշումներով:

Միաժամանակ, հարկ է նշել, որ **ՀՀ առողջապահության նախարարի 04.08.2020թ. *«Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (covid-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին»* N 17–Ն հրամանում 08.10.2021թ. N 78-Ն և 01.12.2021թ. N 84-Ն հրամաններով կատարված լրացումների ու փոփոխությունների արդյունքում սահմանվել են նաև նոր կանոններ և տնտեսավարողների կողմից նշված կանոների պահպանման նկատմամբ վերահսկողությունը ևս օրենքով վերապահվել է տեսչական մարմիններին:**

Ըստ այդմ, տեսչական մարմինները, ի թիվս այլ պահանջների, վերահսկողություն են իրականացնում նաև նշված պահանջների պահպանման նկատմամբ՝ խախտումներ հայտնաբերելու պարագայում իրականացնելով վարույթ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:

Ստորև ներկայացվում են 2021 թվականի ընթացքում սահմանված ընթացակարգերի պահպանմամբ կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված կիրառվող սահմանափակումների պահպանման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքները, մասնավորապես.

- ✓ իրականացվել է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կիրառվող սահմանափակումների պահպանմանն ուղղված 77 596 ստուգայց.



✓ իրականացված ստուգայցերի ընթացքում արձանագրվել է 4607 խախտման դեպք.



✓ 2021 թվականի հոկտեմբերի 15-ից իրականացվել է նաև 16 401 ստուգայց՝ ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 8-ի N 78-Ն հրամանով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, որոնց ընթացքում արձանագրվել է 528 խախտման դեպք:

Ըստ այդմ, անվտանգությունն ապահովելու և հնարավոր խախտումները զսպելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս շատ ստուգայցեր, ինչը առկա ռեսուրսներով և ընթացակարգերով խնդրահարույց է և ժամանակատար: Միաժամանակ, Վարչական իրավախախտումների

վերաբերյալ օրենսգրքի 182[2] հոդվածով նախատեսված է պատասխանատվություն միայն սննդամթերքի անվտանգության բնագավառում դիտարկումներ իրականացնող անձանց պահանջները չկատարելու և դիտարկումների ընթացքին խոչընդոտելու համար, այնինչ տեսչական մարմինը վերահսկողություն իրականացնում է ոչ միայն դիտարկումների, այլ նաև այլ գործիքակազմի, այն է՝ ստուգումների, աուդիտների, դիտարկումների, անասնահամաճարակային մշտադիտարկումների, բուսասանիտարական մշտադիտարկումների, ստուգայցերի միջոցով, որոնց խոչընդոտելու համար պատասխանատվություն նախատեսված չէ, ինչը գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում՝ խաթարելով տեսչական մարմնի կողմից վերջինիս օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումը:

3. **Կարգավորման նպատակը**

Վարչական վարույթի առանձնահատկությունները, չխաթարելով մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորվածությունը, կարող են թելադրված լինել հանրային շահերի պաշտպանության լրացուցիչ գործիքների ներդրման անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, Նախագծով առաջարկվում է հնարավորինս պարզեցնել տեսչական մարմինների կողմից Կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չզբաղվող այլ կազմակերպությունների, այդ թվում՝ կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների խախտումների հետ կապված վարույթները՝ նախատեսելով, որ Կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չզբաղվող այլ կազմակերպությունների, այդ թվում՝ կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում **միայն խախտում թույլ տված անձանց կողմից հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմված արձանագրության առթիվ դիտողություն չներկայացվելու պարագայում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի ստուգայց իրականացնող պաշտոնատար անձը տեղում կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ օրենքով սահմանված կարգով**: Ընդ որում, գործնականում հնարավոր տարընթերցումներից

խուսափելու նպատակով ամրագրվել է, որ հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմված արձանագրության առթիվ խախտում թույլ տված անձանց կողմից դիտողություն ներկայացվելու պարագայում վարույթը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարկ է նշել նաև, որ հանրային առողջության պաշտպանությունը ենթադրում է այնպիսի լրացուցիչ լծակներ, որոնք բնորոշ չեն այլ ոլորտներում հանրային շահի պաշտպանությանը, ուստի հանրային առողջության պաշտպանության որոլտի վարչական վարույթի առնչությամբ սահմանվել են վարչական վարույթի այնպիսի առանձնահատկություններ, որոնք վերաբերում են վարչական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին (այս դեպքում, այդպիսինն են միայն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը), վարչական վարույթի ժամկետներին (Կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չզբաղվող այլ կազմակերպությունների, այդ թվում՝ կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում միայն խախտում թույլ տված անձանց կողմից հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմված արձանագրության առթիվ դիտողություն չներկայացվելու պարագայում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչը ***տեղում*** կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ օրենքով սահմանված կարգով):

Ընդ որում, առաջարկվող կարգավորումը, ըստ էության, կիրառվելու է միայն այն պարագայում, երբ առկա են լինելու խախտման առկայության ակնհայտ հիմքեր, որոնք տվյալ պահին չեն վիճարկվելու տվյալ խախտումը թույլ տված անձի կողմից՝ վերջինիս համաձայնությամբ, քանի որ գործնականում առկա է մի իրավիճակ, երբ առկա են ակնհայտ խախտումներ, որոնք անգամ տնտեսավարողների կողմից չեն վիճարկվում բացահայտման պահին, սակայն տեսչական մարմինը գործող օրենսդրությամբ չունի լիազորություն տեղում կիրառել պատասխանատվության միջոց: Միաժամանակ,
Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182[2] հոդվածով սննդամթերքի անվտանգության բնագավառում դիտարկումներ իրականացնող

անձանց պահանջները չկատարելու և դիտարկումների ընթացքին խոչընդոտելուց զատ սահմանվում է պատասխանատվություն նաև ստուգումների, աուդիտների, դիտարկումների, անասնահամաճարակային մշտադիտարկումների, բուսասանիտարական մշտադիտարկումների, ստուգայցերի ընթացքին խոչընդոտելու համար՝ տեսչական մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված վերահսկողության արդյունավետությունը ապահովելու նպատակով:

4. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից:

5. **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում հնարավորինս կբարձրացվի Կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չզբաղվող այլ կազմակերպությունների, այդ թվում՝ կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների խախտումների հետ կապված վարույթների իրականացման արդյունավետությունը, կնվազի ժամանակատարությունը, անհարկի վարչարարությունը՝ նպաստելով տեսչական մարմինների առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

6. **«Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը**.

Նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

7. **«Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».**

Նախագծերը չեն բխում համապատասխան ռազմավարական փաստաթղթերից: